«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ legal@fcurartu.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11.04.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ԱԽ-149
Խախտում՝	1. «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Թալասյանի կողմից (26342) մրցակցին հարվածելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) 2. «Ուրարտու-2» թիմի դարպասապահների մարզիչ Ալբերտ Օհանյանի (3780) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Ալաշկերտ-2» - «Ուրարտու-2», 08.04.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Թալասյանին (26342) որակազրկել 6 (վեց) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի ապրիլի 8-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 4 (չորս) խաղ, պայմանականորեն չկիրառել: «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Թալասյանի (26342) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի հուլիսի 8-ը ներառյալ:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Ուրարտու-2» թիմի դարպասապահների մարզիչ Ալբերտ Օհանյանին (3780) որակազրկել 6 (վեց) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի ապրիլի 8-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 3 (երեք) խաղ, պայմանականորեն չկիրառել: «Ուրարտու-2» թիմի դարպասապահների մարզիչ Ալբերտ Օհանյանի (3780) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի հուլիսի 8-ը ներառյալ:

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 21-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: